ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ
ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201
հեռ. /0232/ 3-10-26, ashtarakmunicipality@gmail.com

01 ՀՈՒԼԻՍԻ 2026թ.

ԹԻՎ 3999

« ՄԱՍՏԵՐԳՐՈՒՊ ՍՊԸ »-ին

ՀՎՀՀ 00240525

(Հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն 2թղմ. 18/2.,բն38)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Աշտարակի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՄԱՍՏԵՐԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև կնքված ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-25/7/2 ծածկագրով՝ Աշտարակ համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների կատարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, նախագծային փաստաթղթերով,նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրային պարտավորությունները համաձայնսույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվի և N 2 հավելվածով սահմանված աշխատանքների կատարման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում:

Պայմանագրով պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների իրականացման արդյունքում պարզվել է, որ կատարողի կողմից չեն պահպանվել պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով սահմանված աշխատանքների կատարման ժամանակացույցով նախատեսված ժամկետները և չեն կատարվել N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքները:ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն Հավելված N 2:3.1.2 կետի համաձայն՝ Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժերը:3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն էականորեն խախտել է պայմանագիրը: Կապալառուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է պայմանագիրը՝ համարելով այն լուծված չափաբաժին 2-ում 4534107 (չորս միլիոն հինգ հարյուր երեսունչորս հազար չորս հարյուրյոթ) ՀՀ դրամի չափով, չափաբաժին 4-ում 6868975 (վեց միլիոն ութ հարյուր վաթսունութ հազար ինը հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամի չափով, չափաբաժին 5-ում 7798759 (յոթ միլիոն յոթ հարյուր իննսունութ հազար յոթ հարյուր հիսունինը) ՀՀ դրամի չափով, չափաբաժին 7-ում 16529515 (տասնվեց միլիոն հինգ հարյուր քսանինը հազար հինգ հարյուր տասնհինգ) ՀՀ դրամի չափով:

Ընդհանուր 35731356 (երեսունհինգ միլիոն յոթ հարյուր երեսունմեկ հազար երեք հարյուր հիսունվեց) ՀՀ դրամի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

<Գնումների մասին> օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը մասնակիցը հրավերով և կամ պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և կամ որակավորման ապահովման գումարը:

Այսպիսով «ՄԱՍՏԵՐԳՐՈՒՊ» ՍՊԸ -ին տրվում է 10 տասը օրացուցային օր տուժանքով սահմանված որոկավորման ապահովման 525000 /հինգ հարյուր քսանհինգ հազար/ՀՀ դրամը և պայմանգրի ապահովման 350000 /երեք հարյուր հիսուն հազար/ՀՀ դրամ գումարները Աշտարակի համայնքապետարանի 900445101083 հաշվին փոխանցելու նպատակով: Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում <Գնումների մասին> օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն «ՄԱՍՏԵՐԳՐՈՒՊ» ՍՊԸ -ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազոր մարմին, իսկ մատակարարի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության տուժանքի ձևով կներկայացվեն մատակարարի բանկ նշված գումարները գանձելու նպատակով:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Վ. ՍԱՖԱՐՅԱՆ

Կատարող՝
Հրայր Հակոբյան
*հեռ. (0232) 3-10-26*117*